տարեկանին՝ յաջողեցաւ յամրոկ ածել **նէսիի 6 բուն բօ**ռոցները : «Փուշ»երով ու «պատիւ»-ներով իր յօրինած բոլոր զիրերուն օրինակները հաւաքելով շքեղ այլօմ մը կազմած՝ Եմմա. Նախարար Մահմուտ Ճէլալէտտին Բաշայի ձեռամբ մատոյց Սուլթանին և արժանացաւ Գ. կարգի Մէճիտիէ պատուանշանի և Գեղարուեստից շքաղրամի :

* * Բաց ի իր մասնակի զբաղումներէն, Միհիթարեան Բերայի բնակարանին մէջ ուներ ձուլարան մը (1882 - 3) Գրիգոր Ռափայէլեանի հետ զործակցաբար : Յետոյ տեղին անպատեհութեան տեսակէտով ձուլարանը փոխադրած է Պոլիս, և ընկերին բաժնուելով՝ զործը յանձնած է Առ. Տամատեանի որ քանի մը տարի շարունակած է զայն, մինչև վարպետին մահը : Այնուհետև իր ժառանգորդ զաւակներն ընկերովի կը շարունակեն ձուլարանի զործը՝ Խաչիկ Գէորգեանի հետ :

* * Այս անխոնջ արուեստագէտն ու քաջարուեստ տպագրիչը որ «Թուրքերու Կիւրեմպէրկը» կոչուած է նո՛յն իսկ Թուրքերու կողմէ, 80 տարեկան պատկառելի ալեւոր մըն էր՝ երբ ձեռնարկեց ձեռագիրի ձեւով **ըզգա** տառերու հայրերը յօրինելու, զոր իր մահէն քանի մը օր առաջ աւարտեց և որ կրնայ նկատուիլ Միհիթարեանի գլուխ-գործոցը : — Աւելորդ չըլլայ յիշել թէ Միհիթարեանի հնարած զիրերէն առաջ՝ Իսլամացած Իպրահիմ անուն Հունգարացին և Պօղոս Արապեան շինած էին **Արապ օղլու** յորջորջուած վայելչաբեռնէ զուրկ զիրը՝ ցարդ զործածութեան մէջ : — Վերջին տարիներուն, Միհիթարեան Բերայի տանը մէջ ուներ իր աշխատանոցը: Անոր չորս պատերուն մէջ, արեւ ծագէն մինչև մայրամուտ՝ այս ծերունազարդ արեւելցի Կիւրեմպէրկը փակուած և ջուխտակ աչոգքները քիթին՝ լուիկ մնջիկ կը տքներ անդուլ, իսկամ տառերու նկարչային բանաստեղծականութեանը մէջ խորասոյզ : Իր վսեմ տեսլականն էր այդ գործն աւարտելէ՛ վերջ աւանդել հոգին. ինչպէս որ այ եղաւ 17 Նոյեմբեր 1891 ին, Բերա, իր բնակարանին մէջ:

1 شو جهان معرفتده اليوم حير تبخشای انظار اعتبار اولان بونجه بدايع مدنيه‌نك بودرجه‌لرده ترقی‌دار اولمقلغنه برسبب مادی آرانیلورسه باسمه‌نك ایجادینی کوستومك کافیدر.

2 شو جهان معرفتده اليوم حير تبخشای انظار اعتبار اولان بونجه بدايع مدنيه‌نك بودرجه‌لرده ترقی دار اولمقلغنه برسبب

3 شو جهان معرفتده اليوم حير تبخشای انظار اعتبار اولان بونجه بدايع مدنيه‌نك بو درجه‌لرده ترقی‌دار اولمقلغنه بر

4 شوجهان معرفتده اليوم حير تبخشای انظار اعتبار

5 شوجهان معرفتده اليوم حير تبخشای انظار اعتبار

ՆՄՈՅՇՆԵՐ Յ. ՄԻՒԶԷՆՏԻՍԵԱՆԻ ՅՕՐԻՆԱԾ ԹՈՒՐՔ ՏԱՌԵՐԷՆ
1. Նէսիի 6 բունբօ, 2. Նէսիի 12 բունբօ, 3. Նէսիի 16 բունբօ, 4. Նէսիի 24 բունբօ, 5. Ըզգա 24 բունբօ:

* * Միհիթարեան Յովհաննէսի կեանքը սերտ ադերս ունի Թուրքիոյ ո՛չ միայն զրական ու տպագրական, այլ և նիւթական զարգացման հետ : Իր օրով Տաճկաստան մուտ զտած են, առաջին անգամ ըլլալով, **կալվանօի, սբէրէօրիպի** և **զինկոկրաֆի** ճիւղերը՝ տպագրական բազմապահանջ արուեստին : Հայազգի այս մեծանուն արուեստագէտին յաւէտ երախտապարտ պիտի մնանք մենք՝ Հայերս ու Թուրքերը մանաւանդ : Թուրք մամուլն էր որ իր մահուան առթիւ պանծացուց արդիւնաշատ կեանքն անմոռանալի վաստակաւորին, յոյժ պատուաբեր դրուատիքներով : Ուստի արժան և վայե՛լ է որ Օսմանցիք յաւերժացուցեն անոր յիշատակը՝ Գեղարուեստից վարժարանը կամ այլուր կանգնելով արձանը Միհիթարեանի, ա՛յն մարդուն որ կենդանութեանը կտակեց արդէն իր անունը՝ հնարած իր տառերուն : — Յառաջ բերենք իր մահուան առթիւ Օր. Մարիի ուղղեալ բազմաթիւ ցաւակցական զիրերէն՝ Արմաշու վանահօր սա տողերը, որոնց մէջ այնքան հոգ ու ճիշդ կը պատկերանան ազգօգուտ ծառայութիւնները հուչակաւոր տպագրիչին. — «Ոդբալի ադա մը եկաւ հարուածել Ձեր զերդաստանը, ադի՛տ մը որուն վրայ ո՛չ թէ խօսից դարձուածքով պէտք է նայիլ : Ամէն Հայ որ զիր-